

## ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

### ԲՈՒՄ-ին ներկայացվող սահիկաշարեր կազմելու համար

«Բնագիտության ուսանողական մրցաշարին» նախապատրաստվելիս՝ թիմերի համար ավելի քան արդիական է արդյունավետ սահիկաշարի ստեղծումը:

Ներկայացնում ենք «Այբ» հիմնադրամի կողմից մշակված չափանիշներ, որոնք կօգնեն որևէ առաջադրանքի շուրջ սահիկաշար կազմելիս:

Սահիկաշարը պետք է լինի գեկուցման պատկերազարդ հակիրճ նկարագիրը: Դրա առաջին և երկրորդ սահիկներում պետք է հստակ նշված լինեն թիմի անունը և ներկայացվող առաջադրանքը: Սահիկաշարը պետք է լինի .ppt (PowerPoint Presentation) ֆորմատով և դիզայնը պետք է համապատասխանի հետևյալ հիմնական պահանջներին:

#### 1. Սահիկ

Բոլոր սահիկները պետք է լինեն համարակալված և վերնագրված, եթե նույնիսկ մի քանի սահիկներ ունեն նույն վերնագիրը: Սահիկաշարը կարող է ունենալ առավելագույնը 20 սահիկ:

#### 2. Սահիկաշարը և ելույթը ներկայացնել հայերենով

#### 3. Սահիկի գույնը

Ֆոնի և տեքստի գույները պետք է լինեն կոնտրաստային. մուգ ֆոնի վրա՝ բաց գույնի տառեր և հակառակը:

#### 4. Տեքստի օգտագործումը

Սահիկում տեքստը պետք է օգտագործել հնարավորինս քիչ: Որոշ դեպքերում կարելի է օգտագործել նաև նշակետեր (bullets): Նախընտրելի է 24-36pt չափ ունեցող հնարավորինս պարզ տառատեսակների կիրառումը (Arial ընտանիքի, Verdana, Tahoma...):

#### 5. Ավելորդ տարրերի, անիմացիաների առկայություն

Մի՛ ծանրաբեռնեք սահիկները անիմաստ գրաֆիկներով և աուդիովիզուալ էֆեկտներով: Գրաֆիկներ օգտագործեք միայն այն դեպքում, երբ ձեր միտքը արտահայտելու այլ հնարավորություն չկա:

#### 6. Դատարկ տարածության սկզբունք

Սահիկներում թողեք դատարկ տարածություններ. դրանք թույլ են տալիս գեկուցումը դարձնել ավելի ընկալելի:

#### 7. Սահիկի տարրերի փոխկապակցվածություն

Սահիկի վրա տարրերը պետք է տրամաբանական հաջորդականություն ունենան և համակարգված լինեն:

#### 8. Սահիկաշարի ներկայացումը

Սահիկաշարը պետք է նախատեսված լինի գեկույցը լսողների համար՝ նյութը ավելի ընկալելի դարձնելու: Այն չպետք է կազմվի որպես գեկուցողի խոսքի կրկնօրինակ. սահիկներից ընթերցումը չի խրախուսվում: